



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 90

« 01 » օգոստոսի 2018թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Գ.ՄԻՐԻՉԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Այգեվան համայնքի ղեկավարի 2018 թվականի հուլիս ամսվա որոշումներն ու կարգադրությունները:

Առդիր « 5 » թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Կատ.՝ Ռ. Կարապետյան



Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՎԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱԴԱՆ

АРМАВИРСКИЙ МА

МУНИЦИПАЛИТЕТ

С. АЙГЕВАН



«16» հուլիսի 2018 թ.

ԹԻՎ 6

ՔԱՂՎԱԾՔ

Բնակելի տան հասցեի վերանվանման մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի բնակիչ՝ (Խանգուցյալ) Սարգակ Կարապետի Աղախանյանին պատկանող բնակելի տանը (ծածկագիր 0004 - 0003) տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 6-րդ փողոցի 11-րդ տուն հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
Իսկականի հետ ծիշ է:



ՀԱՍՏՅՔԻ ՂԵԿՎԱԿԱՐ՝

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



№ 7

19. հուլիսի 2018 թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԻՆԱ ԱՐՏՈՒՇԻ ՉԵՐՖԱԼԱԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքացի Նինա Գրիգորի Չերֆալակյանը ծնվ.05.08.1959 թ. դիմել է Այգեվան համայնքի 7-րդ փողոցի 4-րդ տուն հասցեում գտնվող տանը և տնամերձ 0.08 հա օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տանը և շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001 թ. և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահվող շահերը կառուցված չէ քաղաքաշինական նորմերին ու կանոններին էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Բավարարում են « ՀՀ համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները:

Հողամասը չի ընդգրկում ՀՀ հողային օրենքների 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում: Հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենքների 60-րդ հոդվածի 8-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006 թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և նույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում յրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել՝ Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 7-րդ փողոցի 4-րդ տան հասցեում գտնվող տան շենք-շինությունների և տնամերձի նկատմամբ քաղաքացի՝ Նինա Արգուշի Չերֆալակյանի՝ ծնված 1959թ. սեփականության իրավունքները 0.08 հա օրինական հողամասի վրա գտնվող, օրինական կառուցված՝ բնակելի տուն 27,90 քմ՝ կառուցված 1999թ., բնակելի տուն 62,20 քմ՝ կառուցված 1981 թ., բնակելի տուն 44,80 քմ՝ կառուցված 1953 թ., մառան 10,80քմ՝ կառուցված 1981 թ., հացարուն 16,00 քմ՝ կառուցված 1981 թ., ծածկ 10,10 քմ՝ կառուցված 1999թ., անասնաշենք 21,70 քմ՝ կառուցված 1981թ., հավաքուն 5,90 կառուցված 1999թ., հավաքուն 6,50 1981 թ., մառան 15,20 քմ՝ կառուցված 2013 թ., ավտոտրակ 35,50 քմ՝ կառուցված 2013 թ., խորդանոց 38,10 քմ՝ կառուցված 2018 թ.:

2. Առաջարկել ՀՀ Կ Ա Ա Գ Կ Պ Կ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Նինա Արգուշի Չերֆալակյանին, սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թվականի հուլիսի 19
Այգեվան համայնք

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՎԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

АРМАВИРСКИЙ МА

МУНИЦИПАЛИТЕТ

С. АЙГЕВАН



«19» հունիսի 2018 թ.

ԹԻՎ 8

ՔԱՂՎԱԾՔ

Բնակելի տան հասցեի վերանվանման մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի բնակիչ՝ Նինա Արտուշի Չերֆալակյանին պատկանող բնակելի տանը (ծածկագիր 0014 - 0003) տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 7-րդ փողոցի 4-րդ տուն հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
Իսկականի հետ ճիշ է:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

« 19 » հուլիսի 2018թ

թիվ 9

ՀՈՂՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Նինա Արտուշի Չերֆալակյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Այգեվան համայնքում գտնվող Նինա Արտուշի Չերֆալակյանին սեփականության իրավունքով պատկանող 04-062-0014-0003 ծածկագրով 0,08 հա հողամասից ավել օգտագործվող 0,004 հա հողամասը տրամադրել անհատույց սեփականության իրավունքով: Հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

АРМАВИРСКИЙ МАРЗ

ԱՅԳԵՎԱՆԻ

МУНИЦИПАЛИТЕ

ՀԱՍԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

С. АЙГЕВАН



31 հուլիսի 2018 թ.

թիվ 10

ՔԱՂՎԱԾՔ

Բնակելի տան հասցեի վերանվանման մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի բնակիչ՝ (հանգուցյալ) Շավարշ Մելիքի Մելքոնյանին պատկանող բնակելի տան (ծածկագիր 0021-0007) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 4-րդ փողոցի 21 տուն հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Իսկականի հետ ճիշտ է:

ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ:



(Handwritten signature in blue ink)

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ